Այդ ժամանակ առանձին կամ քչւորով չէր կարելի ճանապարհորդել. Աղարայի եւ Լիվանայի լաղերը շարունակ կողոպտում էին անզէն ժողովրդին: Ուստի մեզ առաջնորդում էին մեր արիւնակից եօթը զինուած կտրիճներ, որոց ղեկավարում էր մեր կընքահայրը՝ Թէլի-Ակոն: Դեսպակի լուսամուտից անվերջ զննում էի չորս բոլորս նըկատուած տեսարանները. իսկ մայրս անընդհատ պատասխանում էր հարցերիս: Մայրս լաւ ծանօթ էր ճանապարհին, եւ տգէտ կին չէր: Կէսօրին իջանք Այդը (Ցովտակ-Պէգաս) լճակի ափին ճաշելու եւ ձիերին կեր տալու: Լճակի վճիտ ջրերի մէջ լողում էին անթիւ կոճեր (ձուկ), որոնք իրենց ցատկրտոցով ինձ գրաւել էին: Ես հարցրի կնքահօրս թէ՝ – ինչի՞ են Ցովտակ անուանել լճակը:

— Լճի յատակում Ցովտակներ են ապրում, պատասխանեց ժպտալով:

— Դու տեսե՞լ ես այդ Ցովտակներին, ու՞ր են դրանք, ես չեմ տեսնում:

— Դրանք միայն քաջերին են երեւում, որոց տանում են ամպերի վրայով, ուր որ կամենում են գնալ: Ամէն մարդու աչքի չեն ընկնիլ:

Փոքր հասակից վարժ էի ձի նստելու: Այս Ցովտակի առասպելը այնքան խոր տպաւորութիւն ունեցաւ ինձ վերայ, որ ապագայում շարունակ թախանձում էի ծնող-